ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР. БИОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ АРМЕНИИ
XX, № 10, 1967

ՍԱՐԳԻՍ ԻՍԱՅԻ ԱԲՈՎՅԱՆ
(1869—1942)

Սարգիս Իսայու Աբովյանն իր ժամանակի այն սակավաթիվ գիտնականներից էր, որոնք քաղաքական-հասարակական, պետական գործունեության զուգընթաց բեղմնավոր աշխատանք են կատարել նաև գիտական ու գիտակազմակերպչական ասպարեզում։ 1895 թվականին ավարտելով Լայպցիգի համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետի և ապա Հալլեի համալսարանի ընդհանուր ագրոնոմիական ֆակուլտետի լրիվ դասընթացը, նա մասնագիտանում է կաթի տեխնոլոգիայի գծով։



Ֆրանսիայում, Շվեյցարիայում և Հոլանդիայում կաթնամթերքների արտադրությանը ծանոթանալուց հետո, 1896 թվականին Փարիզում նա ուսումնասիրում է կաթի և կաթնամթերքների միկրոֆլորան, հարստացնելով իր գիտական պաշարը նաև այդ ուղղությամբ։

1897 թվականին վերադառնալով իր հայրենիքը՝ Ջալալ-Օղլի գյուղը (ներկայիս Ստեփանավան քաղաքը), Սարգիս Աբովյանը երկար ժամանակ մեծ ջանքեր է թափում Լոռվա գյուղացիներից կաթնագործական արտելներ-ընկերություններ կազմակերպելու համար, սակայն տեղի իշխանությունները խոչընդոտում են, խանգարելով նրան հասնելու իր նպատակներին։

Եվրոպայում եղած ժամանակամիջոցում Սարգիս Աբովյանը լավ ծանոթանում է եվրոպական մի քանի երկրների, հատկապես Շվեյցարիայի, Հոլանդիայի և Նորվեգիայի անասնապահության, անասնաբուծության գործի զարգացման, լավ տիրապետում է այդպիսի աշխատանքներ վարելու եղանակներին։ Վերադառնալով հայրենիք, նա ցանկանում էր իր հայրենակիցներին զինել անասնապահությունը և անասնաբուծությունը վարելու նորագույն եղանակներով, որպեսզի նրանք իրենց անասուններից ավելի մեծ բարիքներ — արտադրանքներ ստանան, սակայն նա չկարողացավ իր նպատակներն իրականացնել, քանի որ նրան շատ էին խանգարում մի կողմից՝ մանր — ցրված անհատական տնտեսությունները, մյուս կողմից՝ այն մեծ խոչընդոտները, որ ստեղծում էին տեղական իշխանավորները։

Իր այդ ձգտումները մասամբ իրականացնելու համար Սարգիս Աբովյանը 1890-ական թվականների վերջերին Շուլավերում (ներկայումս Շահումյան —

Վրացական ՍՍՀ) բացում է պանրագործարան և մինչև 1906 թվականը հայ ու ադրբեջանցի գյուղացիներից այնտեղ պատրաստում է կաթնագործ կադրեր։

1905 թվականին, քաղաքական իրադարձությունների հետևանքով, այդ պանրագործարանի ունեցվածքը ավարի ենթարկվելով, թալանվում է։ Սարգիս Աբովյանի այդ շնորհակալ գործն էլ խափանվում է, որից հետո, 1906 թվականից նա մանկավարժական աշխատանքի է անցնում Թիֆլիսի Գայանյան դպրոցում՝ սկզբում որպես բնագիտության և մաթեմատիկայի դասատու, իսկ հետագայում աշխատում է նաև որպես նույն դպրոցի տեսուչ։

Հայաստանում սովետական իշխանության հաստատվելուց հետո, 1921 թվականի սկզբներին Սարգիս Աբովյանը տեղափոխվելով Երևան, վարում է մի շարք պատասխանատու պաշտոններ։ Նա եղել է Հայկական ԽՍՀ Հողժողկոմատի կոլեգիայի անդամ, որոշ ժամանակ վարել է նաև Հողժողկոմի տեղակալի պաշտոնը։

1922—1923 թվականներին Սարգիս Աբովյանը եղել է Լուսավորության ժողովրդական կոմիսար, ապա մինչև 1925 թվականը՝ նույն կոմիսարիատի կոլեգիայի անդամ և գլխավոր պրոֆեսիոնալ կրթության բաժնի վարիչ։

1925—1928 թվականներին Աբովյանը նորից աշխատում է Հողժողկոմատում, վարելով «Պանիրյուղկենտրոնի» վարչության նախագահի պաշտոնը։

Վարչական աշխատանքներին զուգընթաց, 1923 թվականից սկսած Ս. Աբովյանն իր մասնագիտության՝ կաթնատնտեսության գծով մանկավարժական և գիտական աշխատանք է կատարում Երևանի պետական համալսարանում։ Նա բարձրորակ դասախոսություններ էր կարդում կաթի տեխնոլոգիայից։ Ս. Աբովյանը միաժամանակ եղել է պետական համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետի դեկանը, իսկ երբ 1930 թվականին այդ ֆակուլտետի բազայի վրա կազմակերպվեց հայկական գյուղատնտեսական ինստիտուտը, նա եղավ վերջինիս առաջին դիրեկտորը և այդ պաշտոնը վարեց մինչև 1937 թվականը։

Սարգիս Աբովյանը բազմակողմանի պատրաստականություն ունեցող գիտնական էր։ Նա շատ լավ գիտեր անասնապահությունը, անասնաբուծությունը, հատկապես կաթնատնտեսությունը և հարակից մասնագիտությունները։ Նրա անվան հետ է կապված կաթնատնտեսության զարգացումը Հայաստանում։ Սարգիս Աբովյանի գրչին են պատկանում հայերեն լեզվով գրված առաջին «Կաթնատնտեսության դասընթաց» ձեռնարկը, մի շարք գիտական և գիտահանրամատչելի գրքույկներ ու հոդվածներ, որոնք մեծապես նպաստեցին կաթնատնտեսության զարգացմանը Հայաստանում։ Այդ աշխատություններից շատերը ներկայումս էլ չեն կորցրել իրենց թարմությունն ու նշանակությունը։

Սարգիս Աբովյանը գործուն մասնակցություն է ունեցել Հայաստանի տավարի ցեղի բարելավման, կովերի կաթնատվության բարձրացման համար անհրաժեշտ միջոցառումներ մշակելու գործում։ Հատկապես հիշատակության արժանի են այն շնորհակալ աշխատանքները, որ նա առաջին անգամ կատարել է Հայաստանում պանրագործությունը զարգացնելու և պանիրների տեխնոլոգիան կատարելագործելու ուղղությամբ։

Սարգիս Աբովյանը մահացել է 1942 թվականին։

Պրոֆ. Հ. Կ. ՓԱՆՈՍՅԱՆ